

Գենդերային հավասարության մասին

Հարգելի գործընկերներ.

2015 թ. հուլիսի 1-ին կայացած հանդիպման ժամանակ մենք թռուցիկ անդրադարձանք սեռերի հավասարության հարցին՝ գենդերին, որը շատ նորաձև է դարձել մեր օրերում:

Գենդերային հավասարության խնդիրը, ինչպես այն դիտարկվում է մեր հասարակության լիբերալ հատվածի կողմից, հանգեցվում է տարբեր սեռի ներկայացուցիչների միջև իրավունքների և ազատությունների հավասարության ձեռքբերմանը հասարակության սոցիալական, հասարակական և առօրյա կյանքում: Ակամա հարց է ծագում. «Ի՞նչպիսի հավասարության համար ենք մենք պայքարում»:

- Հավասարություն տարասեռ սուբյեկտ-անձերի միջև.
- Տարասեռ սուբյեկտ-անձերի հավասարություն՝ օրենքների և նորմերի առջև.
- Հավասարություն տարասեռ սուբյեկտ-անձերի պայքարում՝ սոցիումում իրենց արժանի տեղը զբաղեցնելու համար, այսինքն՝ ըստ մեր հասարակության արժեքների հիերարխիկ համակարգի հանրորեն պահանջված լինելու:

Ըստ իս, պայքարը գենդերային հավասարության համար մղվում է չափազանց ուղղագիծ ու ամբոխահաճո, անցում կատարելով «մարդ-սուբյեկտ» հասկացողությունից՝ իր անհատական բնութագրերով և անհատական հատկանիշներով դեպի «մարդ-օբյեկտ» միայն անհատական պարամետրերով:

Ներկայացնենք որոշ հասկացություններ:

Համաձայն Ն. Ա. Բերդյանի («Ոգի և իրականություն») սահմանումների՝ անձն է կերտում իրեն. «...Ես իմ ներսում պետք է կերտեմ անձին, և այդ կերտումը մշտական պայքար է... Անձն ու անհատը նույնը չեն: Անհատը նատուրալիստական, կենսաբանական տեսակ է... Իսկ անձը՝ հոգևոր...»:

Մեր հասարակության առավել լիբերալ հատվածը, մարդկանց ըստ սեռի բաժանելով, նախապես ձգտում է նրանց հակադրել ֆիզիկական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունների հիման վրա, իսկ հետո ֆունկցիոնալ իմաստով հավասարեցնել միմյանց առանց հաշվի առնելու ֆիզիկական, ֆիզիոլոգիական և

բարոյա-հոգեբանական տարբերությունները: Ընդ որում, ընդհանրապես հաշվի չի առնվում տվյալ հասարակության հոգևոր-մշակութային և բարոյաէթիկական «կլիման»:

Չգտելով սեռերի «համընդհանուր» հավասարեցման՝ մենք ներխուժում ենք մարդկային բնության երկակիության միասնության մեջ:

Սեռերի և նրանց ֆունկցիոնալ հնարավորությունների բացարձակ հավասարությունը, առանց հաշվի առնելու նրանց բնական տրված ֆիզիկական, ֆիզիոլոգիական և հոգեբանական տարբերությունները, ամենայն հավանականությամբ, կհանգեցնի մարդկային ցեղի ինքնառչնչացման:

Մարդկային բնության երկակիության միասնությունը իրենից ներկայացնում է երկու տարասեռ անհատների միավորում՝ ֆիզիկական, ֆիզիոլոգիական և հոգեբանական ասպեկտներում փոխադարձաբար լրացնող ֆունկցիաներով, և նպատակաուղղված է բնության հիմնական բնական օրենքի իրականացմանը՝ մարդկային ցեղի շարունակմանը:

Տարասեռ սուբյեկտ-անձերի միջև ֆունկցիալ հավասարությունը անբնական երևույթ է և հանգեցնում է յուրաքանչյուր սեռին բնորոշ բարոյական և էթիկական սահմանների «լրոզման»:

Տարասեռ սուբյեկտների հավասարությունը օրենքների և նորմերի առաջ, իմ կարծիքով, պետք է դիտարկել երկու տարբերակով, այն է՝

- Օրենքների և նորմերի համակարգը հաշվի է առնում տարասեռ սուբյեկտ-անհատների ֆիզիկական, ֆիզիոլոգիական և հոգեբանական տարբերությունների առանձնահատկությունները.
- Օրենքների և նորմերի համակարգը կանոնակարգում է սուբյեկտ-անձերի գործունեության և գոյության ոլորտը: Տվյալ դեպքում պայքարը գենդերային հավասարության համար պետք է ուղղված լինի սուբյեկտ-անձերի ձևավորմանը:

Անձը, առաջին հերթին, իմաստային կատեգորիա է, օրենքների և նորմերի ամբողջ համակարգը պետք է նպաստի դրա ձևավորմանը:

Մարդկային կյանքի բուն արժեքը նրա բովանդակության որակն է: Մարդ-անձը կայանում է որակական արժեքների միջոցով՝ կապված այս կամ այն սոցիալական խմբի հետ նրա ունեցած վերաբերմունքի, հանրային շահերի կամ մարդասիրական գաղափարներին ծառայելու հետ:

Անձին չի կարելի դիտարկել որպես այլոց պրագմատիկ արժեքներն իրագործող զենքի՝ տվյալ սոցիումի պատմականորեն ձևավորված հոգևոր-մշակութային արժեքներին չհամապատասխանող:

Սոցիալական առօրեականությունը իր սահմաններով և նորմերով չպետք է զրկի անձին իր ստեղծագործական ինքնատիպությունից: Ահա սրա համար պետք է պայքարեն իրավունքի և նորմերի առաջ գերդերային հավասարության ջատագովները:

Սակայն առաջ է գալիս հետևյալ հակասությունը. եթե ժողովրդավարությունը ընդհանուր հավասարության իրականացումն է հասարակական կյանքի բոլոր ասպեկտներում, ապա անձի համար կարող է անբարենպաստ լինել, քանի որ այն համահարթեցնում է անձին, և բոլորին հասցնում միջին մակարդակի, այսինքն՝ պայմաններ է ստեղծում անդեմ մարդու ձևավորման համար: Սա լուրջ խնդիր է և նկարագրված է Գ.Լեբոնի «Ժողովուրդների և զանգվածների հոգեբանությունը» գրքում: Արժե թարմացնել ձեր հիշողությունը...

Սոցիումում իր արժանի տեղը գրավելու համար տարասեռ սուբյեկտ-անձերի պայքարի հավասարությունը՝ հավասարության հիմնական կանխադրույթն (պոստուլատն) է, որն իրականացվում է ընկալման/ճանաչման անվերջ պայքարով: Հասարակության ընկալումը/ճանաչումը մարդկանց ընդհանրության մոտիվների ընկալումն/ճանաչումն է: Մարդկանց ընդհանրությունը նշանակում է անձի տարբեր հարաբերությունները հասարակության մեջ:

Անձը ընդհանրության մասն է: Անձը ունի սոցիալական բովանադակություն և կոչում: Այդ հատկությունները հասարակությամբ չեն որոշվում, դրանք որոշվում են հասարակության հանդեպ անձի վերաբերմունքով:

Եթե անձի վերաբերմունքը հասարակության հանդեպ համապատասխանում է հասարակական պահանջվածությանը, ապա անձը հանդիսանում է արժեք սոցիալական կյանքում:

Առանց հաշվի առնելու ազգային հոգևոր-մշակութային և բարոյահոգեբանական արժեքները, զենդերային հավասարության հիմնախնդիրը՝ իրականացված դրանց ունիվերսալացման ուղիով՝ հիմնվում է մեր հասարակության որոշակի հատվածի պրագմատիկ մտածելակերպի վրա և իրականացվում «անձ» հասկացությունը փոխարինելով «անհատ» հասկացությամբ: Մարդու անհատականացումը նրա օբյեկտիվացումն է, այսինքն՝ մարդու վերածումը օբյեկտի: Օբյեկտիվ աշխարհում շփումը մարդկանց միջև փոխարինվում է օբյեկտների միջև տեղեկատվության փոխանցմամբ, որը հանգեցնում է անձի միայնության: Ժամանակակից աշխարհում

միայնության դեմ պայքարը փոխարինվում է զարգացած սպառողական հասարակության ներդրմամբ, որտեղ անհատը նույնպես «ապրանք» է: Մարդը դառնում է առաջարկության առարկա, և որպես հետևանք, հասարակության մեջ նկատվում է սոցիալական կազմալուծման աճ, ազգակցական կապերի անկում, ծնելիության նվազում, միայնակ մայրերի քանակի աճ, և ամենակարևորը, հոգևոր-մշակութային և բարոյահոգեբանական արժեքների անկում:

Լևոն Ներսիսյան

Սախարովի կենտրոնի տնօրեն